

352
L-24

ԻՆՉՊԵՍ ԱՇԽՈՒԺԱՑՆԵԼ ԳՅՈՒՂԻՄՈՐՅՈՒԹՆԵՐԸ

ԽՈՀՄ ԺՈՂՈՎՐԴՈՒԹՆԵՐԻ ԿԵՆՏՐ. ԶՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՄՈՍԿՎԱ 1926

30.04.2013

352
L-2445

գ. ԼԱՎՐԵՆՑՅԱՎ

1 MAR 2010

ԽԱՂԱՔԻ ԱՇԽՈՒԹԱՑՆԵՐ

ԳՅՈՒՂԻՄՈՑՈՒԹԵՐԸ

10007
335/5

Հ

Բ

ԽԱՂԱՔԻ ԳՈՂՈՎԼՈՒԹՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԹՅՈՒՆ

ՄՈՍԿՎԱ

1926

Чапечатано в типогр. Госиздата
 „Красный Пролетарий“
 Москва, Пименовская
 ул., д. № 16, в коли-
 чест. 4000 экз.
 Главлит
 № 54313.

Մենք թևակոխել են մեր հեղափոխության
 մի այնպիսի շրջան, յերբ բանվոր դասակարգի
 և գյուղացիության դաշինքի պահպանման և ամ-
 րապնդման հարցը դարձել ե մեր քաղաքական,
 տնտեսական և կուլտուրական կյանքի ամենա-
 հիմնական, ամենահրատապ և ամենաանհետաձը-
 գելի խնդիրը. Մենք այժմ լրջորեն և յերկար
 ժամանակով, նոր հիմքերի վրա,—մեր յերկրի
 տնտեսական և կուլտուրական աճման հիմքերի
 վրա,—պետք ե ամրացնենք պրոլետարական քա-
 ղաքի և աշխատավոր գյուղի, բանվորների ու
 գյուղացիների դաշինքը, պետք ե հաստատուն
 դարձնենք գյուղացու վստահությունը դեպի
 բանվորներն ու նրանց զեկավարությունը. աշ-
 խատավոր գյուղացիությունը պետք ե վերջնա-
 կանապես զրավենք պրոլետարական հեղափո-
 խության և սոցիալիստական շինարարության
 կողմը, պետք ե գյուղացու մեջ հաստատուն
 դարձնենք այն համոզմունքը, վոր սոցիալիս-
 տական շինարարությունը, բուրժուական կար-
 գերի հետ համեմատած, ձեռնոու յե նրա հա-
 մար:

Կոմունիստական կուսակցությունը իր ուշադրության կենտրոն ե դարձրել գյուղում տարվող աշխատանքը:

Կուսակցությունը հայտարարել ե, վոր գյուղում մեր հիմնական անելիքը պետք ե լինի՝ խորհուրդները ուժեղացնել և աշխուժացնել, գյուղացիության ակտիվությունը խորհրդային աշխատանքի համար ոգտագործել:

Տնտեսական հաջողորդություններ յեվ խորհրդային ապարատի բարելավում.

Մեզ բոլորիս համար միանգամայն պարզ ե, վոր գյուղացիության հետ դաշնակցելու քաղաքականությունը չի սահմանափակվում միայն խորհրդային ստորին ապարատի բարելավումով, անկուսակցականներին աշխատանքի քաշելով և այլն. Առաջին հերթին տնտեսական խնդիրներն են վորոշելու բանվորա-գյուղացիական դաշինքի բախտը: Բանվոր դասակարգի՝ գյուղացիությանը դեկավարելու գործը, գյուղացիության վստահությունը դեպի բանվորները — կամբանդվին առաջին հերթին այն չափով, ինչ չափով Խորհրդային Իշխանությունը տնտեսական հաջողություններ կունենա, ապրանքները գյուղի համար կաժանանան, հարկերը կթեթևանան, գյուղատնտեսության բարձրացման համար վարկ կհատ-

կացվի, հողաշինարարական և մելիորատիվ աշխատանքներ կտարվեն, գյուղատնտեսական, սերմացուի և ուրիշ ողնություն կհասցվի և այլն:

Սակայն սխալ կլիներ բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդման գործը սահմանափակել բացառապես տնտեսական հարցերով: Գյուղացիությունը պակաս չե տուժում այն անկազմակերպությունից, հիվանդագին յերեսույթներից, վորոնք բուն են դրել մեր խորհրդային, մանավանդ ստորին, ապարատներում: Բյուրոկրատիզմ, գործի ձգձգում, կաշառակերություն, քմահաճույք, արբեցողություն, անուշադիր վերաբերմունք դեպի շարքային այցելուն, անփույթ վերաբերմունք դեպի բնակչության անհրաժեշտ կարիքները, — բոլոր այս՝ մեր ապարատում հաճախ հանդիպող հիվանդագին յերեվույթները փոքր դեր չեն խաղում գյուղացիական կյանքում և դեպի Խորհրդային Իշխանությունն ունեցած նրա վերաբերմունքի հարցում:

Բացի այդ, խորհրդային որգանների աշխատացման և բարելավման հարցը ունի իր գուտքադրական կողմը: Գյուղացիությունը պրոետարիատի դեկավարության տակ մասնակցում է Իշխանության, մեր բանվորա-գյուղացիական յերկրի կառավարության գործին՝ գյուղական և գավառամասային խորհուրդների միջոցով, ընտրելով

ներկայացուցիչներ՝ գավառամասային, գավառային և կենտրոնական իշխանության որգաններում աշխատելու համար.—աշխատացնել խորհուրդները—այդ նշանակում ե գյուղացիների համար ավելի իրական, հասկանալի և մատչելի դարձնել նրա մասնակցությունը իշխանության յեվ յերկրի կառավարման գործում։ Իսկ չե՞ վոր գյուղացիությունն իշխանության մասնակից անելը հանդիսանում ե մեր քաղաքական ուժի հենարաններից մեկը։

Յեթե մենք այժմ չենք կարող գյուղացիությանը լիովին տալ այն նյութական տնտեսական ոգուտները, վոր նա մեզանից իրավացիուրեն սպասում ե և պահանջում, յեթե մենք դեռ այնքան աղքատ ու քայքայված ենք, վոր ներկա բոպեյին չենք կարող գյուղացիությանը ցույց տալ և ապացուցել խորհրդային կարգերի տնտեսական առավելությունները բուրժուականից,—սակայն դրա փոխարեն մենք կարող ենք հասնել նկատելի բարելավման՝ յերկիրը կառավարելու գործում, կարող ենք բուժել մեր խորհրդային ապարատը բազմաթիվ հիվանդագին յերեսութներից, մոտեցնել դա բնակչությանը և նրա կարիքներին, գյուղացուն հասկացնել և այնպես անել, վոր նա սրտանց մասնակցի յերկրի կառավարության գործում։

Դրա մասին իլլիչը գեռ 1919 թվին ասել ե մեղ։

«Մենք չունենք այնպիսի բարիքներ, վոր կարողանանք տալ միջակ գյուղացուն, իսկ նա նյութալաշտ ե, գործնական և մեղանից պահանջում ե շոշափելի նյութական այնպիսի բարիքներ, վոր մենք այժմ նրան տալ չենք կարող։ Բայց մենք շատ բան կարող ենք անել մեր վարչական գործնեյության մեջ, այն ե՝ բարելավել մեր ապարատը, վերացնել բազմաթիվ գեղծումները։ Մենք կարող ենք և պետք ե շրտկենց մեր կուսակցության գիծը, վոր բավարար չափով չեր տարվում միջակ գյուղացիության հետ դաշնակցելու, համաձայնության գալու ուղղությամբ։»

Ի հարկե, մենք տնտեսության մեջ հսկայական առաջադիմություն ենք ցույց տվել՝ համեմատած այն շրջանի հետ, յերբ քաղաքացիական կոփը կլանել եր մեր բոլոր ուժերը։ Սակայն հիմնականում այսոր ել կենինի վերոհիշյալ միտքը հանդիսանում ե հրատապ։ Մենք դեռ չենք բացել գյուղացիության առաջ մեր տնտեսական հնարավորությունները, ուստի և առանձին ուշադրություն պիտի դարձնենք գյուղում «վարչական ոլրակտիկայի» վրա։

Գյուղագիության իաղախական ակտիվության
աճումը

Ներկայումս գյուղում քաղաքական հիմնական
փաստը գյուղացիության ակտիվության աճումն
է, վորպես հետեւանք զյուղի տնտեսական և կուլ-
տուրական զարգացման:

Քաղաքացիական կոխվը վերջանալուց հետո
անմիջապես զյուղացիական մասսան ամբողջ
թափով ձեռնարկել ե իր տնտեսությունը վերա-
կանգնելու աշխատանքին: Անցել ե մի քանի
տարի և մենք գյուղում ականատես ենք վոչ
միայն գյուղատնտեսության բարձրացման, այլ
և կուլտուրա-քաղաքական մեծ առաջխաղացու-
թյան:

Գյուղացիական մասսան հանգստացել ե ու
իրեն հավաքել, նրա կուլտուրական մակարդակը
բարձրացել ե, պահանջներն ավելացել են, ակ-
տիվությունն ուժեղացել ե: Մենք այժմ գյու-
ղում ունենք անկուսակցական առաջավոր գյու-
ղացիների մի ամբողջ խավ, վորոնք անցել են
իմպերիալիստական և քաղաքացիական պատե-
րազմների, կարմիր բանակի դպրոցը, գյուղացի-
ներ, վորոնք մասնակից են դարձել քաղաքական
կյանքին՝ խորհուրդների, Կոմյերիտմիության,
գյուղացիական հասարակական կազմակերպու-

թյունների և մեր մեծ հեղափոխության չտես-
նված ու վիթխարի դպրոցի միջոցով:

Այդ առաջավոր գյուղացիները ձգտում են
աշխատանքի՝ վարչության, գյուղացիական կյան-
քի կազմակերպման և բարելավման, գյուղատըն-
տեսության բարձրացման գործում:

Գյուղացիությունը ձգտում է յերեան բերե-
լու իր ինքնագործնեյությունը. դրա պատճառը վոչ
միայն զյուղի տնտեսական և կուլտուրական
աճումն ե, այլ և վորակական վորոշ փոփոխու-
թյունները, վոր տեղի յեն ունեցած գյուղացու-
տնտեսության մեջ: Նորից բորբոքվում ե պայ-
քաբը շերտավորվող գյուղացիության տարբեր
խավերի միջև, նորից բորբոքվում ե պայքաբը
չունենող գյուղացիության և գլուխ բարձրացնող
շահագործող կուլակային տարբերի հակադիր
շահերի շուրջը: Այդ պայքաբը շոշափում է գյու-
ղացիության ամենակենսական, առորյա շահերը
— և հողաշնարարության ժամանակ, և հարկը
վճարելիս, և կոռակերատիվի աշխատանքներում,
և կուլակի շահագործական ձգտումների գեմ
կովելիս, — ամենուրեք և ամեն բանում, յերբ
գլուխ բարձրացնող կուլակը փորձում է ոգտա-
գործել իր տնտեսական ուժը՝ զյուղն իրեն յեն-
թարկելու և իր հարստատությունն ավելացնելու
համար: Մյուս կողմից աճում ե աշխատավոր

գյուղացիության տնտեսության ապրանքայնությունը (կապը շուկայի հետ), Գյուղացիական տնտեսությունը զարգանում է այնպես, վոր գյուղացու մթերքների վաճառման պայմանները, շուկայում արտադրության միջոցներ և սպառման առարկաներ ձեռք բերելու պայմանները, դառնում են տնտեսության դոյության և զարգացման ամենակարևոր պայմաններից մեկը։ Այստեղից անխուսափելի յեւ և գյուղացիության հասարակական այն ակտիվության զարգացումը, վորին վորակես հիմք ծառայում են՝ զյուղում դասակարգային հակասությունների և հասարակական կապերի աճումը և գյուղացիության՝ մեր յերկրի տնտեսական կյանքի վորոշ ընթացքով շահագրգուված լինելը։ Այստեղից և հասկանալի յեւ այն ձգուումը, վոր պետք ե ազգել և ավելի մոտ մասնակցություն ունենալ յերկրի կառավարման, նրա քաղաքական ու տնտեսական կյանքին վերաբերող հարցերի լուծման գործում։

Գյուղական տնտեսության մեջ մենք մոտենում ենք մինչչպատերազմյան մակարդակին։ Բայց գյուղացիական մասսան այժմ չի կարող բավարարել հետամնաց տնտեսության այդ մուրացկանական մակարդակով, վորը մեզ ժառանգություն է թողել հին կիսաճորտատիրական ցարական Ռուսաստանը։ Հեղափոխությունը գյու-

ղացիության մեջ զարթեցրել է հուժկու ձբգտում դեպի արտադրական, տնտեսական ուժերի զարգացում, բարեկեցության բարձրացում, կուլտուրական կյանք։ Բայց այդ ճանապարհին կան բազմաթիվ արգելքներ։ Գյուղացին ել հենց ցանկանում է ոգտագործել ձեռք բերած իշխանությունը, վորակեսզի կալվածատերից խլած հողի վրա «նոր գյուղ» կառուցի։

Գյուղացիության ակտիվությունը պետք է ընթանա խորհրդային գծով։

Եյականն այն ե, վոր մեր գյուղացիության այդ ձգտումը, նրա ակտիվությունը ընթանա այնպիսի հունով, այնպիսի ուղղությամբ, վոր գուգադիսլի սոցիալիստական տնտեսական շինարարության մեր աշխատանքին։ Եյականն այն ե, վոր գյուղացիական այդ ակտիվությունը ընթանա վոյ թե կողակային գծով, այլ զյուղի պրոեւսարական ղեկավարության, խորհրդային աշխատանքի գծով։

Դա հենց այդպես կինք միայն այն դեպքում, յեթե մենք սովորենք անկուսակցական աշխատավոր գյուղացիությունը, առաջավոր գյուղացուն խորհրդում աշխատանքի քաշել, յեթե մենք գյուղացուն մոտեցնենք իշխանության, նրան մասնակից դարձնենք յերկիրը կառավելու գոր-

ծին և ամենից առաջ՝ գյուղում և գավառակում գյուղացիական անտեսության և կենցաղի դեկավարման ու կազմակերպման գործին։ Դա նշանակում է, վոր մենք վճռականապես պետք է հրաժարվենք գյուղում տարվող խորհրդային աշխատանքի այնպիսի ձևերից ու միջոցներից, վորպիսին մենք Ռուսաստանում գործադրում ենք քաղաքացիական կովի տարիներին։ Գյուղուն «հրամայելու» միջոցը անհրաժեշտ եր այն տարիները, յերբ յերկրի, հեղափոխության բախտը կախված եր գյուղում ժամանակին հաց ժողովելուց, գյուղում հանդես յեկող քաղաքական տատանումների վճռական հաղթահարումից և ուժեղ, յերկաթե ձեռքով այնտեղ հեղափոխական կարգ հաստատելուց։ Այդպիսի գրության համապատասխան՝ այն ժամանակ իշխանությունը գյուղում (Ռուսաստանում) կենտրոնացած եր այնպիսի նեղ գործադիր որդանների ձեռքում, վորոնք կարող ենքն շտապ և առանց տատանման կատարել վերից յեկող անհետաձգելի կարգադրությունները, ամենից առաջ տուրք հավաքելու (մասնատրում), զորահավաքի գործում և այլն։ Մի կողմից այլանդակություններն ու զեղծումները, մյուս կողմից «հրամանատարության» հարցում չափից անցնելն, իհարկե, այն ժամանակն ել անհանդուրժելի եյին և առաջացնում

եյին գյուղացիության իրավացի անբավականությունը, ինչպես նաև կուսակցության և խորհրդային իշխանության պայքարը այդ յերկույթների դեմ։ Սակայն յերկրի ամբողջ ուշադրությունը, ուժն ու յեռանդը դարձված եր մի ուղղությամբ—յետ մղել թշնամուն, ձեռքում պահել հողն ու ֆարբիկաները, իշխանությունը, իսկ հետագայում՝ սովը հաղթահարելու և անտեսական կյանքի քիչ թե շատ տանելի պայմաններ ստեղծելու ուղղությամբ։

Հարկադրանել յեվ համոզում։

Այժմ գրությունն արմատապես փոխվել եւ Այժմ թե իշխանության և թե մասսայի առաջ կանգնած են հերթական այլ խնդիրներ, նրանց ուշադրության կենտրոնն այժմ ուրիշ հարցեր են գրավում։ Այդ նոր խնդիրները, այդ նոր հարցերը չեն կարող վճռվել աշխատանքի հին ձևերով։ Գյուղացու տնտեսությունը բարձրացնել, գյուղացիությանը հողաշինարարության համար կազմակերպել, ոգնել նրան՝ անցնելու և ներառյան կուլտուրական ձեվերի, զյուղացիությունը կոռպերացումի յենքարակել, չքափորին և միջակին միացնել կուլակային ազգեցության և հարստահարման դեմ, գյուղի կուլտուրան բարձրացնել, իշխանության ստորին ապարատը առողջացնել, ամուր կապե-

բով գյուղը կապել սլրոլետարական քաղաքի հետ,
—այս բոլորն անհնարին և անիրականալի յե՛
վերևից հրամայելու և լոկ վարչական կարգա-
դրությունների միջոցով։ Ընդհակառակն, այդ-
պիսի խնդիրները, այդպիսի ձեռնարկությունները
հնարավոր են և իրազործելի՝ ամենից առաջ գյու-
ղացիական լայն խավերը ոգտագործելով, նրանց
գործի մեջ քաշելով, նրանց ինքնազործնեյությու-
նը յերևան բերելով և, խորհրդային որդանների
հետ ձեռք ձեռքի տված ու կուսակցության զե-
կավարությամբ, նրանց մասնակից անելով այդ
աշխատանքին։ Գյուղացիության՝ նոր գյուղ կա-
ռուցելու աշխատանքը ղեկավարել կարող և մի-
այն այն գյուղական կոմունիստը, միայն այն
խորհրդային աշխատողը, վորը վոչ միայն իշխա-
նության, հրամանի ուժով, այլ ամենից առաջ
հորդորելով, իր անձնական որինակով և ցուց-
մունքներ անելով և ղեպի իրեն գրավում գյուղա-
ցիությունը. պետք ե այնպես անել, վոր այն
նորը, ինչ վոր մենք կառուցում ենք գյուղում,
չինի վերևից կամ դրաից գյուղացիության
վզով փաթաթած բան, կողմնակի և ոտար նո-
րամուծություն, այլ լինի իրենց՝ ամենաառաջա-
վոր մասսաների և ապա բոլոր մնացած գյուղա-
ցիների գիտակից ձգտման և ստեղծագործական
աշխատանքի հետևանք։ Ղեկավարել գյուղացիու-

թյունը, այդ—ներկա պայմաններում նշանակում
ե կազմակերպել գյուղացիական ակտիվությու-
նը, դրան տալ խորհրդային ուղղություն, իրեն՝
գյուղացիության շընանից նորանոր ուժեր մաս-
նակից անել գյուղի մեր շնարարական աշխա-
տանքին։

Խորհուրդները մասսայական իմանագործունե-
տուրյան մարմիններ են.

Գյուղացիական այդ հասարակայնությունն
ինչպես կազմակերպել և դրան ուղղություն տալ:
Ինչպիսի՞ մարմիններ կարող են և պարտավոր
են գյուղացիական այդ ինքնազործնեյությունը
կենտրոնացնել, իրեն՝ գյուղացիության միջից
յելող այդ ուժերն իրենց շուրջը համախմբել և
կազմակերպել։

Հարցը բոլորովին պարզ ե—այդ կարող են
անել, այդ պես ե անեն մեր խորհուրդները։

Վորպես իշխանության մարմինների՝ խոր-
հուրդների բնույթն այնպես ե, վոր դրանք միա-
ժամանակ և կառավարող մարմիններ են, և մաս-
սայական ինքնազործնեյության մարմիններ։
Խորհուրդները հենց նրանով ել տարբերվում են
իշխանության բոլոր այլ ձևերից, վոր նրանց մի-
ջոցով բանվորներն ու գյուղացիներն իրականա-
ցնում են իրենց իշխանությունը և իրականա-

ցնում են վոչ միայն անուղղակի կերպով, վոչ միայն նրանով, վոր այդ իշխանությունը պաշտպանում ե բանվորի և գյուղացու շահերը, — այլ և անմիջապես, նրանով, վոր մասսայի մասնակցությունն իշխանության գործերին ամենից լավ և ամենից լրիվ ապահովում ե խորհրդային սիստեմով, խորհրդային սահմանադրությամբ:

Յեկ յերբ մեր կուսակցությունը գյուղի աճող ուժերը պետական աշխատանքին ու շինարարության մոտեցնելու խնդիրն ե առաջարկում, — առաջին հերթին մեր առաջ ծառանում և խորհուրդների և ամենից առաջ խորհրդային իշխանության ստորին բջիջների՝ գյուղական յեկ գալառամասային խորհուրդների աշխուժացման խնդիրը:

Գյուղացիական ակտիվությունը — քաղաքական խնդիրների մասին խոսելու մի դադարկ ձըդտում չե: Գյուղացին ձգտում ե գործնական աշխատանքի, նա ցանկանում ե վոչնչացնել իշխանության որդաններում բուն դրած ձգձգումներն ու զեղծումները, ուղում ե լավացնել դպրոցների դրությունը, տուրքերի բաշխումը, բարելավել կոռպերացիայի աշխատանքը, արագացնել հողաշնարարական աշխատանքները, վերանորոգել կամուրջները և այլն և այլն:

Ի՞նչպես կարելի յե այդ բոլորն իրագործել:

Միայն խորհուրդների միջոցով, իշխանության այդ մարմինների միջոցով, վորոնք միաժամանակ և ծառայում են մասսաները կազմակերպելու ու նրանց ինքնագործնեյությունը յերեան բերելու համար:

Հենց խորհուրդներն են ընդունակ ընդգրկելու գյուղացու կյանքի բոլոր կողմերը — և տընտեսության, և կուլտուրայի, և կենցաղի, և կառավարելու հարցերում: Միևնույն ժամանակ միայն խորհուրդները կարող են ապահովել գյուղացու այդ ինքնագործնեյության համար այնպիսի ընթացք, վոր այդ ինքնագործնեյությունը սերտ կերպով շաղկապվի խորհրդային պետություն և կոմունիստական հասարակություն կառուցելու մեր շինարարական աշխատանքին, և վոչ թե այդ աշխատանքին հակառակ կամ այդ աշխատանքին չվերաբերող ընթացք ստանա: Խորհուրդները, վորպես բանվորա-գյուղացիական մարմիններ, ներկայացնում են մեր հեղափոխության այդ յերկու հիմնական դասակարգերի զողումի, շաղկապվի (սմիչկայի) գործնական իրականացման ամենալավ ձեր, այդ շաղկապի, վորի հիման վրա մենք գյուղացիությունը կառաջնորդենք վոչ թե կուլակային-բուժութեական, այլ սոցիալիստական զարգացման ուղիյով: Յեթե մենք այդ ինդիրների տեսակետից գնա-

հատենք խորհրդային իշխանության՝ գյուղում գոյություն ունեցող որդանների՝ ստորին խորհուրդների ներկա դրությունը, —այն ժամանակ կհասկանանք այժմ մեր կուսակցության կողմից առաջադրած խնդրի՝ խորհուրդների աշխատացման ամբողջ նշանակությունը, կարևորությունն ու այժմեյականությունը:

Խորհրդային աշխատանքի թերությունները
գյուղում.

Մենք այլս չենք խոսի մեր ստորին ապարատում գոյություն ունեցող այն հիվանդագին յերկույթների մասին, ինչպես են՝ կաշառակերությունը, զեղծումները, քմահաճույքը, վորոնք յերբեմն արտահայտվում են ահոելի չափերով, ինչպես այդ վերջերս բացահայտ կերպով յերեան յեկավ մի շարք դատական գործերից (գյուղթը թակիցներին հետապնդելու գործերը և այլն): Բայց և այնտեղ, ուր ապարատը քիչ թե շատ կանոնավոր ու շիտակ և աշխատում, գյուղացիական մասսան արդյոք միշտ և զգում իր կապը այդ ապարատի հետ, իր պատասխանատվությունը՝ խորհրդի վիճակի և աշխատանքի նկատմամբ:

Մեր գյուղական խորհունդներն արդյոք այնպես են կապված դյուղական մասսաների հետ, վոր այդ մասսաները յեռանդուն մասնակցություն

ցույց տան խորհուրդների աշխատանքին, իմանան այդ աշխատանքի մասին և աշխատեն մասնակցել: Մենք դրան առանց թազցնելու պետք ե պատասխանենք, վոր մեծ մասամբ մեր գյուղական խորհուրդների և մասսաների միջև այդպիսի կապ գոյություն չունի:

Բնակչությունը խորհուրդների ընտրությանը շատ հաճախ անտարբեր է վերաբերվում, առանց վորևե հետաքրքրություն ցույց տալու: Յեվ այդ վոչ միայն այն պատճառով, վոր առհասարակ գյուղացիական ակտիվությունը թույլ ե, այն այն պատճառով, վոր գյուղական մեր աշխատանքի զանում գոյություն ունեն լուրջ թերություններ:

Շատ տեղերում խորհուրդների ընտրության մասնակցել ե ընտրական իրավունք ունեցող գյուղացիների այնպիսի չնչին մասը, ինչպես, որինակ՝ 10—20 տոկոս: Յեվ այդպիսի դեպքերում գյուղացիք հաճախ այսպես են դատում. «Ել ի՞նչ գնանք ընտրելու, այնտեղ յերկի ամեն բան պատրաստ ե. բջիջը կամ ընտրական հանձնաժողովն ում վոր ուզի, նրան ել կընտրեն, իսկ մեզ մնում ե միայն մատ բարձրացնել»:

Գյուղացիք և մասնավանդ գեղջկուհիները հաճախ չեն ել իմանում ընտրությունների մասին, չգիտեն, թե իրենցից ո՞վ իրավունք ունի ընտ-

ըություններին մասնակցելու, չգիտեն՝ յե՞րբ և
վո՞րտեղ են այդ ընտրությունները կատարվում:

Ընտրական ժողովը յերբեմն տարվում է այն-
պես, վոր աշխատում են, ինչ ել լինի, «անց-
կացնել» բջիջի կամ գալիքոմի կողմից առաջար-
կված թեկնածուներին, բոլորովին հաշվի չառ-
նելով մասսայի տրամադրությունը, նրա վերա-
բերմունքը դեպի այս կամ այն թեկնածուն:
Յեվ հաճախ այնպիսի թեկնածուներ են առա-
ջարկում, վորոնց չեն ճանաչում դյուղացիները,
կամ ճանաչում են վատ կողմից:

Մենք հաճախ ի չարն ենք գործ դնում գյու-
ղի համար վերևից աշխատակիցներ նշանակելը,
մինչդեռ տեղերում կարելի կլինի գտնել համա-
պատասխան մարդիկ:

Կուսակցական բջիջների կողմից առաջար-
կվող ցուցակներում մենք աշխատում ենք, իհա-
շիվ անկուսակցական թեկնածուների, վորքան
կարելի յե կուսակցականների թիվը ավելացնել:
Ընտրական ժողովները հաճախ տարվում են այն-
պես, վոր դժգոհություն են առաջացնում գյու-
ղացիների մեջ, վորոնք այնքան ել ծանոթ չեն
ընտրական տեխնիկային, ընտրության կանոն-
ներին և այդ պատճառով ել զգում են իրենց
անողնական՝ ընտրական հրահանգի այս կամ այն
կետի հանդեպ (ինչպես ե ընտրվում ընտրական

ժողովի նախագահությունը, ի՞նչպես ներկայա-
ցնել թեկնածուների ցուցակներ, քվեյարկել և
այլն): Յեվ հաճախ, նույնիսկ իրենք՝ ժողովի
ղեկավարներն են խախտում ընտրական կանոն-
ները՝ գյուղացիներին զրկելով ընտրության հե-
տևանքի վրա աղղելու հնարավորությունից: Այս
կամ այն կոմունիստ-թեկնածուներին կամ խորհրդա-
յին վարչական անձնավորությանը քննադատելը,
անկախ նրա գործնական բովանդակությունից,
վորոշ դեպքերում բացատրվում ե վորպես հա-
կախորհրդային յելույթ և յերբեմն հանդիպում ե
անհիմն, խիստ դիմադրության, սպառնալիքների,
«կուլակ» և նույնիսկ «հականեղափոխական» վո-
րակումների:

Հասկանալի յե, վոր այդպիսի միջոցները
գյուղացիական մասսան վանում են վոչ միայն
ընտրություններից, այլ և այդ ձեռվ ընտրված
մարմիններից: Անկուսակցական շաբախին գյու-
ղացին, նույնիսկ առաջավոր գյուղացի «ակտի-
վիստը» այդ ճանապարհով վոչ միայն աշխա-
տանքի չի լծում, այլ և վանվում ե նրանից,
վորպիսի հանգամանքը հակասում ե գյուղում
տարվող մեր քաղաքականության և աշխատանքի
բոլոր հիմունքներին:

Խորհուրդների ընտրություններից այժմ անց-
նենք այդ խորհուրդների աշխատանքին: Հաճախ

խորհուրդները փոխարինվում են դրանց նախագահներով, վորոնք իրենց աշխատանքը տանում են առանց խորհրդի շարքային անդամների վերահսկողության ու մասնակցության. և նախագահների աշխատանքը բացառապես լինում է այն, վոր կատարում են բարձրագույն մարմինների վարչական և հարկային կարգադրությունները:

Մի շարք վայրերում մենք ականատես ենք այնպիսի դրության, վոր հենց դրանով ել սահմանափակվում ե խորհրդային ամբողջ աշխատանքը գյուղում։ Մարդիկ կատարում են վերելց յեկող բոլոր կարգադրություններն ու հրամանները. այնինչ չեն հայտնաբերում և վոչ մի նախաձեռնություն՝ տնտեսական ձեռնարկների կուլտուրական աշխատանքի գործում, այդձեռնարկներն իրականացնելու համար ազգաբնակչությունը կազմակերպելու գործում։

Խորհուրդների գերի այդպիսի խեղաթյուրումն արմատապես հակասում ե ներկայումս նրանց առաջ դրված խնդիրներին։

Աշխատացնել խորհուրդները — այդ նշանակում ե վոչ միայն նրանց կապել բնակչության հետ (և ընտրությունների ժամանակ, և նրանցից հետո), վոչ միայն նրանց մեջ աշխատելու քաշել գյուղացիության առաջավոր խավերը, վոչ

միայն նրանց ամբողջ աշխատանքը կապել գյուղացիների շահերի և աշխատանքի հետ, — այլ և խորհուրդները դարձնել գյուղի շինարարության համայնապարփակ մարմիններ, գյուղի տնտեսական և կուլտուրական զարգացման և այդ զարգացմանը խորհրդային գծով (առաջին հերթին — կոոպերատիվ) ընթացք տվող ու կազմակերպող, ղեկավարող մարմիններ։

Հեկ (բ) կենտրոնական Կոմիտեն, ԽՍՀՄ կենտրոնական Գործադիր Կոմիտեն և տեղերի ներկայացուցիչների հետ կայացած խորհրդակցությունները ընդունել են խորհուրդները ուժեղացնելու մասին մի շարք սկզբունքային և գործնական վորոշումներ։ Այդ վորոշումները իրենց գործնական մասում վերաբերում են — 1) խորհրդների ընտրության կարգի բարելավման մասին, 2) խորհրդային ստորին մարմիններին, գրանց առաջ դրված ընդարձակ խնդիրները կատարելու համար, հնարավորություն տալու մասին, 3) խորհրդային ստորինապարատի վիճակի բարելավման, նրա առողջացման մասին։ Այս բոլորը բղխում ե քաղաքական հիմնական սկզբունքային խնդրից — աշխատացնել խորհրդները և գրանց աշխատանքին մասնակցել դարձնել անկուսակցական գյուղացիական մասսաներին — մի միջոց՝ բանվորների և ական մասսաներին գալիքնաքն ամրացնելու համար։

ՀԿԿ (թ) Կենտկոմի վորոշումները՝ զյուդ-
իորնուրդներն աշխուժացնելու մասին:

Դեռևս 1924 թվի նոյեմբերին, ՀԿԿ Կենտրոնական Կոմիտեյի պլենումը, գյուղում տարվելիք աշխատանքի մասին հանաձ իր բանաձեռում, այդ հարցի առթիվ տվել ե քաղաքական հիմնական ցուցմունքներ*): Ինկատի ունենալով Կենտկոմի գյուղում աշխատող բոլոր կոմունիստների համար պարտադիր այդ վորոշման հսկայական անհրաժեշտությունը, մենք այստեղ ամբողջովին կտանք բանաձենի այն մասը, վոր վերաբերում ե Խորհուրդների աշխուժացման ինդքին:

Կենտկոմի բանաձեն ասում ե.

«Ծնտեսական ամբապնդման հետ միասին աճում ե ամբողջ գյուղացիական մասսայի ակտիվությունը: Ընդհանրապես գյուղացիության և մանավանդ չքավոր գյուղացիների քաղաքական ակտիվության այդ աճումը կուսակցությունը պետք ե աշխատի ուղղել ամենից առաջ

*.) Այս գերեկտիվները (ցուցմունքները) երեսոց ուժի մեջ են նաև մինչեւ որու նկ վերջին պլենումը այս գերեկտիվները չի փոփոխել. առկան կենտրոնական Կոմիտեն 1925 թ. սեպտ. 28-ի իր շրջաբերականով, ընդհանուր գծերով նույն ինդերները լուսարանում ե և ընդգծում, վոր ընտրությունների միջոցին պետք ե աշխատել չուներների ու միջակ գյուղացիների միասնական ֆրոնտ կազմել թույլ չտալու կուլակներին (գյուղի զորբաներին) խորհուրդների մեջ անցնելու:

դեպի խորհուրդների աշխուժացումը, Խորհրդացին, կոռպերատիվ և այլ կազմակերպությունների գործնեյության ուժեղացումը: Գյուղական խորհուրդների աշխուժացման այդ խնդիրը, վոր կապված է խորհուրդների աշխատանքի աշխատացման ընդհանուր հարցի հետ, — ներկա մոմենտի հիմնական և ամենասուր խնդիրներից մեկն է հանդիսանում:

Խորհրդային կարգերի հիմնական ամբապնդումը և ընդհանրապես յերկրի քաղաքական պայմանները ներկայումս համառորեն առաջ են քաշում՝ խորհուրդներում իրեն գյուղացիության անմիջական նախացեռնությունն ընդարձակելու և անկուսակցական գյուղացիներին խորհուրդների ամբողջ աշխատանքին ավելի մեծ չափով մասնակից դարձնելու խնդիրը: Խորհուրդներն ուժեղացնելու և աշխատացնելու միջոցով կուսակցության շուրջը պետք ե ստեղծել անկուսակցական ակտիվ գյուղացիության լայն կազմեր, վորտեղից կուսակցությունը կարողանար նոր ուժեր ստանալ, վորոնց միջոցով պետք ե ամբանագյուղական լայն մասսաների հետ ունեցած մեր կապը և ղեկավարությունը, խոկ ինքը, գյուղական մասսան պետք ե ել ավելի մերձենա խորհուրդների աշխատանքին, խորհրդային մարմինները ել ավելի մեծ չափով իր սրախն մոտ ըն-

դունի, վորպես ղեկավար մարմիններ, և իրո՞ք աշխուժացնի խորհուրդների աշխատանքը:

Գյուղի և գավառամասի խորհուրդների իրավունքների և աշխատանքի նյութական հնարավորությունների ընդարձակումը (գավառամասային բյուջեյի սահմանումի հետ կապված) և գավառամասային աշխատակիցների նյութական դրության բարելավման մասին արած վորոշումները կյանք անցկացնելը՝ գյուղական խորհուրդներում աշխատանքը կենդանացնելու և լայնացնելու համար իրական պայմաններ են ստեղծում:

Դրա հետ կապված՝ անհրաժեշտ ե խիստ կերպով հետեւել, վոր պահպանվի հեղափոխական որինականությունը, պետք ե կովել վարչական ամեն տեսակ քմահաճույքի դեմ, ամեն կերպ ուժեղացնել պայքարը բյուրոկրատիզմի դեմ և այլն:

Այդ բոլորը մեր առաջ ե դնում հետեւյալ խնդիրները.

ա) Ընտրությունների ժամանակ խորհուրդներում և գործկոմներում անցկացնել մեծ թվով անկուսակցական գյուղացիներ և գեղջկուհիներ, մասնավանդ նրանց, վորոնք գյուղացիության շրջանում հեղինակություն են վայելում, ավելի լավ են արտահայտում գյուղացիության տրամադրությունները և կարող են խորհուրդներում ու

գործկոմներում ոգտակար աշխատակիցներ լինել: Խորհուրդների հանրապետական և համամիութենական մոտակա համագումարներում ավելացնել անկուսակցական գյուղացիության ներկայացուցչությունը կենտրոնացների կազմի մեջ այնպես, վոր յուրաքանչյուր նահանգից ամենաքիչը մի անկուսակցական գյուղացի լինի (գրեխավորապես այն գյուղացիներից, վորոնք անմիջապես կապված են տնտեսության հետ): Բնդ սմին նրանց իրական հնարավորություն ընձեռնել՝ բարձրագույն մարմինների աշխատանքին ակտիվ ու լայն մասնակցություն ունենալու: Նըման միջոցներ ձեռք առնել նույնպես և նահանգներում ու գավառներում:

բ) Անհրաժեշտ ե ընտրական սկզբունքի ավելի կանոնավոր պահպանում, խորհուրդների աշխատանքին ապօրինի կերպով խառնվելու դեպքերի վերացում:

գ) Ամենակարճ ժամանակներում մի շարք ժողոմատների (Հողգողկոմ, Լուսժողկոմ, Առժողկոմ, Ներքժողկոմ, Սոցագողկոմ և Բ.Գ.Տ.) կոլեգիաների կազմը լրացնել 1—2 այնպիսի գյուղացի անդամներով (գրանց թվում և անկուսակցական), վորոնք կապված լինեն գյուղի ամենալայն խավերի հետ: Շտապ կարգով ապահովել, վոր նահանգական և գավառական տեղա-

կան բաժանմունքներում կոլեգիաների անդամներ (ինչպես և գործկոմի նախագահներ) ընտրվեն նաև գյուղացի (դրանց թվում նաև անկուսակցական) աշխատողներից:

Դ) Մշակել խորհուրդների և գործկոմների աշխատանքն աշխատժացնելու և ընդարձակելու հարցը՝ խորհուրդներին և գործկոմների առանձին բաժիններին կից համապատասխան սեկցիաներ, կոմիսիաներ, խորհրդակցություններ կազմակերպելով, գեղջկուհիների պատգամավորական ժողովները գործի մեջ քաշելով, նույնպես և դյուղացիական կոնֆերենցիաներու համագումարներ կազմակերպելով:

Ե) Ուժեղացնել սիստեմատիկ պայքարը հեղափոխական որինականությունը խախտողների դեմ (վարչական քմահաճույք, կաշառակերություն, բյուրոկրատիզմ և այլն)՝ մեղավորներին դատի հանձնելով, կուսակցական պատասխանատվության կանչելով և մամուլի միջոցով մերկացնելով:

Զ) Խորհուրդների աշխատանքի քաղաքական ղեկավարությունն ուժեղացնելու համար, ուժեղացնել խորհուրդների և տեղական գործկոմների (գավառամասի) կոմունիստական ֆրակցիաների աշխատանքը, կազմակերպելով նրանց կանոնավոր հաշվետվությունն (իրենց գործ-

նեյության մասին) համապատասխան բջիջների և կուսկոմների առաջ:

(Ընկ. Մոլոտովի՝ գյուղում տարվելիք աշխատանքի մասին արած զեկուցման առթիվ Հ. Կ. Կ. (Բ) ԿԿ պլենումի ընդունած բանաձևից):

Այսպես ե գծել մեր կուսակցությունը գյուղական խորհուրդների աշխատժացման սկզբունքային և գործնական խնդիրները: Այդ հարցերը մանրամասն կերպով մշակված են մի շարք խորհրդացին վորոշումների մեջ և կուսակցական ցըաբերականներում:

Խորհուրդների ընտրության վերաբերյալ մենք ունենք Խ. Ս. Հ. Մ. Կենտրոնական Գործադիր Կոմիտեյին կից կազմակերպված՝ Խորհրդացին Շինարարության Խորհրդակցության վորոշումը:

Պետք է բարելավել լամարտիններ կատարելու գործը

Անհրաժեշտ ե ընտրություններն այնպես կազմակերպել, վորպեսզի հնարավոր լինի գրավել ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների ձնշող մեծամասնությունը: Կուսակցական բջիջները և խորհուրդներն ընտրություններից առաջ պետք է կազմակերպեն ընդարձակ կամպանիաներ՝ լայն մասսաներին ընտրությունների նշանակությունը բացատրելու և այսպիսով նրանց

գեպի ընտրությունները գրավելու։ Ընտրություններին մասնակցողների քանակն ավելացնելու հրաշալի միջոց ե ընտրական իրավունք ունեցողներին անձնական ծանուցագիր ուղարկելը։ Այստեղ, վորտեղ այդ ծանուցագրային սխստեմն իրականացվում եր, այստեղ յուրաքանչյուր գյուղացի, յուրաքանչյուր գեղջկուհի իմանում եյին, վոր իրենք իրավունք ունեն և պետք ե մասնակցեն խորհրդի ընտրության, գիտեյին, թե վո՞րտեղ և յե՞րբ են կատարվում այդ ընտրությունները։ Մեծ նշանակություն ունի և ընտրության համար այնպիսի որ նշանակելը, յերբ գյուղացիք ազատ են, և նույնպես այնպիսի տեղ, վորը հարմար ե գյուղացիների համար։

Անկուսակցական գյուղացիներին պետք ե մասնակից անել խորհրդի աշխատամեջներին։

Կուսակցական բջիջներն հարկե վոչ մի գեպքում չպետք ե հրաժարվեան ընտրությունները ղեկավարելուց, իրենց թեկնածուներն առաջարկելուց և այլն, բայց անպայման անհրաժեշտ ե այնպես առաջարկել այդ թեկնածուներին, վոր դա ընտրողների վզին զոռով փաթթել չինի և վորպեսզի խորհուրդում ու գործկոմում կոմունիստների շարքում բավականաչափ տեղ արվի նաև անկուսակցական գյուղացինե-

րին։ Ծիծաղելի կլիներ հուսալ, վոր մեր գյուղում մենք միայն կոմունիստների՛ ձեռքով կարող ենք նոր կյանք կառուցանել։ Կոմունիստները գյուղում մի կաթիլ են կազմում բազմամիւլոն գյուղացիական ծովում, և այդ մի բուռն կոմունիստները կարող են գյուղը իսկապես ղեկավարել միայն այն գեղքում, յեթե իրենց շուրջն, կուսակցության ղեկավարության ներքո, աշխատանքի քաշած անկուսակցական գյուղացիների մի լայն խավ ունենան։ Կարիք չկա ձգտել ավելացնելու կոմունիստների տոկոսը գյուղիսորություններում, գործկոմներում և այլն։ Բանն այժմ վո՞չ այնքան կոմունիստների ավելի տոկոսն ե, վորքան այն, վոր կոմունիստների ղեկավարության տակ կարողանանք կուսակցական ուղղություն տալ հազարավոր և տասնյակ հազարավոր անկուսակցական գյուղացի-աշխատողների աշխատանքին։ Անհրաժեշտ ե հատուկ զգուշությամբ վերաբերվել առանձին քաղաքացիներին ընտրական իրավունքից զրկելու հարցին։ Այսուհետեւ չպետք ե տեղի ունենան այնպիսի գեպքեր, ինչպես՝ աշխատավոր գյուղացիներին կուլակ համարելը, կամ յեկեղեցական խորհրդի անդամներին ու յեկեղեցական յերգեցիկ խմբում յերգողներին կրօնական ծիսակատարներ հաշվելը։

Ընտրական հանձնաժողովները պետք ե այն-

պես կազմվեն, վոր նրանց մեջ մասնակցեն տեղական մարմինների նաև գյուղացիները, ներկայացուցիչները, ինչպես և քաղաքացիների ժողովներում հատուկ ընտրվածները:

Պետք ե վճռական կրիվ հայտարարել ապարինի կամ ուղղակի բյուրոկրատիկ ճանապարհով թեկնածուներ «անցկացնելու» սիստեմի դեմ։ Պետք ե գյուղացիներին իրավունք տրվի հենց այդտեղ՝ ժողովում, առանց մինչև այժմ պահանջվող առանձին ձևականությունների, առաջարկելու իրենց թեկնածուները կամ թեկնածուների ցուցակը։ Ընտրական ժողովները պետք ե դեկավարեն վոչ միայն ընտրական հանձնաժողովի ներկայացուցիչները, այլև նրանց հետ միասին ժողովի կողմից ընտրված նախագահությունները։ Վոչ մի դեպքում չի կարելի հարկադրել, վոր ցուցակը քվեարկեն ամբողջովին՝ յեթե ամեն մի թեկնածուին առանձին քվեարկելու պահանջողներ կան։

Այս կամ այն թեկնածուին քննադատելը պետք ե ամենաուշագիր վերաբերմունքի հանդիպի, և յեթե այդ քննադատությունը արժանի յեւշադրության, պետք ե հանել տվյալ թեկնածությունը և փոխարինել ավելի համապատասխան, ավելի հեղինակավոր թեկնածույով։ Համենայն դեպս պետք ե հրաժարվել հաճախ նկատվող սո-

վորությունից՝ ինչ ել լինի անցկացնել բջիջ ցուցակն առանց փոփոխության։

Խորհուրդները սերտ կապել բնակչությանը, նրանց աշխատանքը բարելավել կարելի յեւ միայն այն գեպքում, յերբ մենք սնակյուրյան կրտսեցնենք և կբարելավենք խորհուրդների ընտրության գործը։

Բջիջը չպետք է փոխարինի խորհրդին։

Խորհուրդների հեղինակությունը բարձրացնելու գործում ահագին նշանակություն ունին նրանց և կուսակցական բջիջների փոխարաբերությունները։ Մեզ մոտ այդ հարաբերություններն հաճախ այնպես են, վոր բջիջը փոխարինում ե խորհրդին, նրան կարգադրություններ ե անում, փոխում ե նրա դեկավարներին, կատարում ե նրա աշխատանքը։ Խորհուրդը բջիջով այդպես փոխարինելն ահագին վես և բերում։ Բջիջի կողմից այդպիսի հրամանատարությունը վոչ միայն թուլացնում ե խորհրդային ապարատը, այլ և առաջացնում ե այն, վոր մասսաները կուսակցությունից գժգոհում են։

Ի հարկե ավելի հեշտ ե անմիջապես հրամայել, քան իր վորոշումներն իրականացնել խորհուրդների, գյուղացիական ժողովների միջոցով, և այլն։ Սակայն յերբ մենք նպատակ ենք գնում

անկուսակցականներին աշխատանքի մեջ քաշել,
խորհուրդները աշխատացնել,—կուսակցական դե-
կավարության այդպիսի միջոցները խորապես
հակասում են այդ խնդիրներին:

Կուսակցական դեկավարությունը յթուղացնել,
այլ ուժեղացնել.

Ինքնըստինքյան հասկանալիյէ, վոր մեր կուսակ-
ցությունը վոչ միայն չի հրաժարվում խորհուրդների աշխատանքները դեկավարելուց և ուղղու-
թյուն տալուց, այլ, ընդհակառակն, աշխատում ե
այդ գեկավարությունն ուժեղացնել: Կոմունիստի
կամամբողջ բջիջի դեկավարությունը չի թուլա-
նում, այլ, ընդհակառակն, մի քանի անգամ ուժե-
ղանում ե նրանով, վոր աշխատանքի մեջ են առ-
նվում անկուսակցական մասսաներ, կուլտուրա-
կան և ակտիվ գյուղացիների խավեր, վորոնց
անզայման պետք ե դեկավարել կուսակցական
վորով, կուսակցական քաղաքականության վո-
րով: Սակայն այդ դեկավարության մեթոդներն
ու ձևերը պետք ե հիմնված լինեն վոչ թե հրա-
մանատարության, այլ հորդորելու, վոչ թե հրա-
մանի, այլ ցուցմունքներ անելու վրա: Լավ չե
այն բջիջը, վորն ամեն բան իր ուժերով ե անում
(իսկ կան և այնպիսի գեպքեր, յերբ տուրքն
ել անմիջապես բջիջն ե հավաքում). ուղիղ և

կանոնավոր աշխատում ե միայն այն բջիջը, վորն
իր նախաձեռնությունը, իր վերահսկողությունն,
իր դեկավարությունն իրականացնում ե մասսա-
յի, գյուղացիական մասսայական մարմինների՝
խորհուրդների միջոցով և աշխատում ե, վոր-
ովեսզի կուսակցական գործը, բջիջի գործը գյու-
ղում դառնա հասարակական մասսայական գործ,
գյուղացիների գործը: Իսկ խորհուրդները պետք
ե դառնան հենց այն հիմնական լծակները, վորոնց
միջոցով կուսակցությունը շինարարության ամ-
բողջ գործում կապվում ե անկուսակցական գյու-
ղացիության հետ:

Հեղափոխության յեվ խորհրդային իշխանության
թշնամիներին պետք է դիմադրություն ցույց տալ:

Ի հարկե, այնպես ել հեշտ չե առանց բա-
ցառության ամեն տեղ, առանց ընդհարումների
լավ ընտրություններ կատարել: Հավանականաբար
կլինեն գեպքեր, յերբ կփորձի դրանից ոգտվել
իշխանության ձգտող կուլակը, կփորձեն զլուխ
բարձրացնել և մեր քաղաքական թշնամիները,
հականեղափոխականները: Հնարավոր ե, վոր այս
կամ այն տեղ, խորհրդային ստորին ապարատնե-
րում, կուլակների, հականեղափոխականների բուն
դնելու և ամրանալու այդ փորձերը կատարվեն
այնպիսի լոգունգների տակ, վոր թշնամական

լինին մեր կուսակցությանը, թշնամական լինին բանվորների ու գյուղացիների դաշինքի գործին:

Բայց յեթե վորևե տեղ հնարավո՞ր են այդպիսի գեղաքերը, գա միայն հաստատում ե այն, վոր մենք վոչ մի գեղաքում գյուղում մի կողմ չպիտի քաշվենք խորհուրդների աշխատանքից, կամ թեկուզ փոքր չափով չպիտի թուլացնենք մեր ազգեցությունը նրանց աշխատանքի և ընտրությունների վրա: Կարեորն այն ե, վորպեսզի կուսակցության ղեկավարությունը գյուղում իրականանա՝ ամենից առաջ գյուղի մեծամասնությունը — նորա միջակ յեվ յավոր մասը — կուսակցության կողմը գրավելու ճանապարհով: Իսկ նրանց մեր կողմը գրավել և գրանով կուլակային բանակում գտնվող մեր թշնամիներին անմաս գարձնել մենք անպայման կարող ենք, յեթե միայն կոմունիստը և նորդորելով և գործով ե աշխատում գյուղացիական մասսաներում հեղինակություն ու հարգանք ունենալ:

Այն կոմունիստները, վորոնք գյուղում սովոր են ամեն մի դժվարություն հաղթահարել, դրանք պետք ե սովորեն նմանապես ուշադրությամբ լսել գյուղացիների գործնական քննադատությունը, պետք ե սովորեն զրոխմերը չկորցնել, այլ դիմադրել կուլակի և հակահեղափոխականի բոլոր հավակնություններին ու յելույթ-

ներին, նրանց մերկացնելով գյուղացիության առաջ, բացատրելով նրանց պահանջների նպատակը և նրանց «քննադատության» անպատճառանափությունն ու անգործնական բնույթը:

Մենք վերեւում հիշատակեցինք, վոր խորհուրդներին հաճախ փոխարինում ե միայն նախագահը: Դա հատկապես խիստ կերպով նկատելի յե գյուղխորհուրդներում, վորտեղ յերբեմն ընտրում եյին միայն մի նախագահ և քարտուղար: Նոր կանոնադրությունը լայնացնում ե գյուղական խորհուրդների կազմը, կրկնապատկելով ներկայացուցչության չափը (1-ը 100. ից, փոխանակ մեկը 200 գյուղացուց): Պետք ե ճշգնել համանել այն վիճակին, վորպեսզի գյուղական և գավառամասային խորհուրդներն իսկապես լինեն այնպիսի լայն մարմիններ, վորոնք կուլեկտիվ կերպով ոգնում են և լուծում գյուղական կյանքի բոլոր կարեւոր հարցերը:

Խորհուրդների աշխատանիքին պես՝ կենդանի բովանդակություն տալ.

Այդպես ե խորհուրդների աշխատացման աշխատանքի առաջին մասը, — այն, ինչ վերաբերում ե խորհուրդների ընարության: Սակայն բավարական չե ընտրությունները լավ կազմակերպել, խորհուրդների աշխատանքին պետք ե կենդանի բովան-

դակություն տալ: Պետք ե աշխատել, վոր խորհուրդները մոտ կանգնած լինեն գյուղացիությանը վոչ միայն նրանով, վոր նրանց ընտրության ակտիվ մասնակցություն ե ցույց տալիս վողջ գյուղացիական մասսան, այլ և գլխավորաբես նրանով, վոր խորհուրդները, նոր գյուղի շինարարության գործում, գյուղացիության յեռանդի հայտնաբերման կենտրոն դառնան, վոր խորհուրդներն զբաղվեն բոլոր այն բազմապիսի տնտեսական, կազմակերպչական և կուլտուրական աշխատանքով, վորի կարիքը գյուղում այնպիսի սուր կերպով ե զգացվում:

Գավառամասային բյուջե:

Տեղական խորհուրդների այդպիսի աշխատանքի համար հիմք ե ծառայում գավառամասային բյուջեն: Զե՞ վոր միանգամայն պարզ ե, վոր առանց միջոցների հնարավոր չե վոչ գյուղական խորհուրդների աշխուժացումը և վոչ ել գյուղի կուլտուրական-տնտեսական պահանջների բավարարումը: Գավառամասային լավ կազմած բյուջեն հենց պետք ե հիմք դառնա խորհուրդների գործնական աշխատանքների ծրագրի համար—դպրոցական գործի, ագրոկայանների, առողջապահության բարեկարգման,

տնտեսության բարձրացման և այլ ասպարիդներում:

ԽՍՀՄ կենտրոնական Գործադիր Կոմիտեյի վերջին նստաշրջանի վորոշումն այն մասին, վոր առաջիկա տարում հավաքվող գյուղատնտեսական հարկից 200 միլիոն ռուբլի հատկացվում ե «վոլոստային» (գավառամասային) բյուջեների ամրապնդման համար,—ներկայացնում ե մի խոշոր և լուրջքայլ, գավառամասային տնտեսությունն կայուն հիմքերի վրա գնելու համար: Դրա հետ միասին արդեն մի շաբթ միջոցներ են ձեռք առնված և գեռ ձեռք պիտի առնվեն ընդարձակելու գավառամասային բյուջեյի յեկամտային աղբյուրները, նրա ոգտին հատկացնելով տեղական նահանգային (գավառային) բյուջեների աղբյուրների վորոշ մասը, գավառամասային տնտեսության իրավասությանը հանձնելով վեղական նշանակություն ունեցող պետական մի շաբթ գույքերը: Կուսակցական և խորհրդային տեղական աշխատակիցները պետք ե առանձին ինսամքով մոտենան տեղական բյուջեն կազմելու գործին, աշխատելով նրա յեկամտային մասը (գլխավորապես ի հաշիվ վոչ հարկային յեկամուտների) ավելացնել միջոցները վորոշ ծրագրով ու նպատակահարմար ձեռվ բաշխել:

Գավառամասային և գյուղական խորհուրդների
նոր կանոնադրությունը նկատելի կերպով ըն-
դարձակել ե նրանց իրավունքներն ու պարտա-
կանությունները և նրանց առաջ գրել մի շարք
ամենալուրջ խնդիրները: Ի՞նչ եր ներկայացնում
գյուղավունուրդը՝ համաձայն հին կանոնադրու-
թյան: Ի՞նչ տեղ եր գրավում նա խորհրդային
մարմինների սիստեմում: Առաջ գյուղխորհուրդը
գլխավորապես համարվում եր վրապես տեղական
վարչական միավոր, վորպես բարձրագույն իշ-
խանության կատարողական մարմին, — ամենից
առաջ հարկեր հավաքելու, գորահավաքի և այլն
հանձնարարություններ կատարելու գործում:
Տնտեսական և կուլտուրական ասպարիզում
գյուղխորհուրդը համարյա փոչ մի իրավունք,
փոչ մի անելիք չուներ:

Նոր կանոնադրությամբ դրությունն արմա-
տապես փոխվում ե և այդ կանոնադրության
իրականացումը, գավառամասային բյուջեն ընդարձակելու
հետ միասին, ամենահիմնական քայլն
ե կազմում խորհուրդների աշխատացման և
բնակչությունը խորհրդային աշխատանքի քաշե-
լու գործում:

Գյուղիորհնությի իրավունքներն ու պարտակա-
նոր յունները.

Գյուղական խորհուրդը պետք ե հոգա գյու-
ղատեսներության բարձրացման մասին, աշխատե-
լով բաղմադաշտյան սիստեմի անցնել, վարելա-
նողի ցրված, իրարից կտրված մասերը միացնել.
Նա պետք ե կազմակերպի ընտանի կենդանիների
բեղմանագործության (ըլցուկություն), անասնա-
բուժական, վարձով տրվող գյուղատնտեսական
գործիքների կայաններ, նա պետք ե գյուղացի-
ներին սերմացույով ապահովի, ադրսկայաննե-
րի աշխատանքը, հողի մշակման ձեռքը բարելա-
վի և այլն:

Գյուղական խորհուրդը պետք ե աշակցի գյու-
ղացիությունը կոռպերատիվ հիմունիթերով կազ-
մակերպելու, արտեխնիկ, կոմունաներ, կոլլեկ-
տիվ տնտեսություններ, գյուղացիական փոխա-
դարձ ոգնություն կազմելու, նա պետք ե կրվի
չքափոր գյուղացիներին սարկացնելու և հարը-
տահարելու գեմ և այլն: Գյուղական խորհուրդը
ղեկավարում և կազմակերպում ե նոր ձեռնար-
կություններ, գյուղատնտեսական մեքենաներ և
գործիքներ նորոգելու համար արհեստանոցներ,
դարբնոցներ, ջրաղացներ, գյուղատնտեսական
մթերքները վերամշակելու համար զանազան

տնայնագործական ձեռնարկություններ և այլն։
Կուլտուր-կրթական ասպարհութ գյուղական
խորհուրդն աշխատում ե բարելավել և զարգա-
ցնել գպըռոցները, անգրագիտության վերացման
կայանները, խրճիթ-ընթերցարանները, գրադա-
րանները, նախադպրոցական հիմնարկություն-
ները, նա հոգում ե լրագրեր, գրքեր, ամսա-
թերթեր տարածելու գործի մասին։

Գյուղական խորհուրդը հոգում ե հիվանդա-
նոցների աշխատանքի բարելավման, վարակիչ
հիվանդությունների գործ կովելու, ճանապարհ-
ներն ու կամուրջները նորոգելու, հրդեհների
դեմ միջոցներ ձեռք առնելու, պոստային կա-
նոնավոր հաղորդակցություն պահպանելու մա-
սին։ Գյուղական խորհուրդը պայքար ե մղում
հանցագործության դեմ (կաշառակերություն,
խուլիգանություն, անսառունների գողություն և
այլն), հակում ե հեղափոխական որինականու-
թյան պահպանման վրա։

Գյուղական խորհուրդներին տրված են վար-
չական մի շարք իրավունքներ, վորոնք առաջ
գավառամասային գործկոմիներին եյին վերապահ-
ված, ինչպես՝ քաղաքացիական գրության ակտ-
երի գրանցում, Խորհրդային հշմանության որ-
ենքների պահպանման հակողություն, պարտա-
գիր վորոշումների հրատարակություն և այլն։

Մենք տեսնում ենք, թե վորքան ընդարձակ
և բազմակողմանին յեն գյուղխորհուրդների իրա-
վունքներն ու պարտականությունները։ Դրանց
վրա հիմքած մենք իսկապես կարող ենք աշ-
խուժացնել ստորին խորհուրդները, վորպես գյու-
ղի կազմակերպչական-տնտեսական և կուտու-
րական աշխատանքի կենտրոններ, իսկապես վոր
կարող ենք գյուղացիությանը մասնակից անել
այդ աշխատանքին։

Ավելի լայն, ավելի խոշոր ե գառնում գու-
վառամասային գործադիր կոմիտեների դերը։

Գավառամասային գործկում։

Գավառամասային գործկոմը գավառամասի սահ-
մաններում ներկայանում ե իշխանության բար-
ձրագույն մարմինը, վորի որինական կարգա-
դրություններին յենթարկվում են տվյալ ըրջա-
նում գտնվող բոլոր կազմակերպություններն ու
հիմնարկությունները։

Ունենալով վարչական բավականաշափ իրա-
վունքներ, աշխատելով գավառամասային բյու-
ջեյի հիմունքներով, գավառամասային գործկոմը
միևնույն ժամանակ հանդիսանում ե գյուղական
խորհուրդների աշխատանքի ղեկավարը և գավա-
ռամասի ամբողջ տնտեսական ու կուտուրական
աշխատանքի կենտրոնը։ Հետևաբար գյուղխոր-

հուրդներին վերաբերող այն բոլոր խնդիրները, վորոնց մասին մենք վերը խոսեցինք, գավառամասային գործկոմի առաջ այդ խնդիրներն ավելի լայն չափով են գրվում։ Այս, ինչ վօր չի կարելի իրականացնել գյուղի մասշտաբով, կարելի յե իրականացնել գավառամասային մասշտաբով։ Մյուս կողմից, զյուղինուրդուրդներն իրենց աշխատանքի ընթացքում հենվում են գավառամասային գործկոմին հյուսվական և կազմակերպչական ոգնության, նրա ցուցմունքների և դեկավարության վրա։

Գյուղատնտեսության բարձրացումը, զյուղիության կոռակերացումը, փոխագարձ ոգնության կազմակերպությունը, արդյունաբերական և տնայնագործական ձեռնարկությունների դեկավարությունը, կուլտուր-կրթական աշխատանքը, առողջապահությունը, բարեկարգությունը, տեղական բյուջե կազմելը, ֆինանսական մարմիններին առողք հավաքելու գործում աջակցություն ցույց տալը, գավառամասի սահմաններում գտնվող բոլոր մարմինների և հիմնարկությունների աշխատանքի դեկավարությունը, ուղղություն տալն ու համաձայնեցումը, գավառամասում պաշտոնյաների նշանակումը, միլիցիայի գործնեյությանն ուղղություն տալը, հանցագործության դեմ պայքարելը, պարտադիր վո-

բոշումներ հրատարակելը և նրանց խախտման համար վարչական տուգանումներ սահմանելը, զինապարտների հաշվառումն, գորակոչի կատարումը, զյուղինուրդներին ցուցմունքներ տալը, հրահանգելը և դրանց աշխատանքի ստուգումը, զյուղական խորհուրդների և գավառամասային համագումարների համար պատգամավորներ ընտրելու գործի կազմակերպումը, հակահեղափոխության գեմ կոիկ մղելը, հեղափոխական կարգի պահպանումը և այլն, և այլն,—ահա գավառամասային գործկոմների աշխատանքի հիմնական ապարեգները՝ այդ գործկոմներին տրված իրավունքների և պարտականություններիներկա սահմաններում։

Մենք կանգ առանք խորհուրդների՝ զյուղում տարվող աշխատանքի այլ հարցերի վրա վոչ թե նրա համար, վոր մանրամասն պատմենք, թե նրանք ինչ պիտի անեն իրենց գործնական աշխատանքի ընթացքում (դա գործնական հատուկ գրքերի և բրոցյուրների ինդիք ե), այլ նրա համառ, վորպեսզի ընդգծենք այն միտքը, վոր խորհուրդները զյուղում պետք ե ընդդրկեն շենարարության բոլոր կարևորագույն կողմերը, նրանք պետք ե գառնան ինքնազործոն մարմիններ՝ տնտեսությունն ու կուլտուրան զյուղում բարձրացնելու, նրանք պետք ե գառնան կենտ-

ըոններ՝ մասսաներին աշխատանքի քաշելու:

Մասսաների մասնակցությունը խորհրդի աշխատանքում: Կանոնավոր հաշվետվորթուն:

Այդ տեսակետից անհրաժեշտ է խորհուրդների աշխատանքն այնպես կազմակերպել, վորդա չլինի անհատների նեղ շրջանի փակբյուրությունիկ աշխատանք, այլ վորդանում մասնակցեն գյուղի բոլոր կաւլտուրական ուժերը—և գյուղացիներից, և՛ գյուղական ինտելիգենցիայից: Խորհրդին կից անհրաժեշտ է կազմակերպել մի շարք սեկցիաներ ու կոմիսիաներ, վորոնց անդամները կարող են մշակել ու իրականացնել խորհրդային աշխատանքի զանազան ինդիքները:

Այդ սեկցիաներն ու կոմիսիաները, վորոնք աշխատանքի յեն քաշում խորհրդի բոլոր շարքային անդամներին ու ակտիվ գյուղացիներին, պետք է կազմակերպվեն խորհրդի աշխատանքի հիմնական ճյուղերին համապատասխան:

Այսպիսով, պետք է կազմակերպել հողային (գյուղատնտեսական) սեկցիա, կոռպերատիվային, կուլտուր-կրթական, տեղական տնտեսության և բարեկարգության, ֆինանսա-հարկային սեկցիաներ և այլն:

Գյուղական խորհուրդներին կից անհրաժեշտ ե սեղծել վերաստուգիչ հանձնաժողովներ՝ գյուղ-

խորհրդի աշխատանքը տնտեսական կողմից ու ֆինանսական հարցերը ստուգելու, ինչպես նաև զեղծումների դեմ պայքարելու համար: Դավանամասային գործկոմներին կից պիտի կազմակերպել գյուղական խորհուրդների նախագահների կանոնավոր համագումարներ, ինչպես և զյուղի բոլոր հասարակական կազմակերպությունների լայն խորհրդակցություններ՝ զյուղի տնտեսական և կուլտուրական շինարարության հարցերի վերաբերյալ:

Խորհուրդներն իրենց գործներության մասին կանոնավոր կերպով պետք է հաշիվ տան քաղաքացիների ընդհանուր ժողովներում: Գավառամասային և գավառային գործկոմները պետք է հաշիվ տան խորհուրդների գավառամասային համագումարները ոլիսի կազմակերպվեն վոչ թե հապճեալ, այլ պիտի շարունակվեն յերկու-յերեք որ, վորպեսզի գյուղացիության ներկայացուցիչներին հնարավորություն տրվի ըստ կարելույն լայն կերպով արտահայտվելու բոլոր հարցերի վերաբերյալ:

Գյուղացիների ժողովները գյուղի կյանքում վորոշ և ճշգրիտ նշանակություն պիտի ստանան: Դրանք պետք է հավաքվեն ամենաքիչն ամիսը մեկ անգամ և դրազգին տվյալ գյուղի տնտե-

սության և բարեկարգության հարցերով։ Այդ ժողովներին պիտի մասնակցեն վոչ միայն «ընտանիքի մեծերը», ինչպես դա շատ հաճախ եր լինում, այլև ընտրական իրավունք ունեցող բուրու չափահաս աշխատավոր բնակչությունը։ Այդ ժողովները չպիտի իրենցով փոխարինեն գյուղական խորհուրդները, իսկ վերջններս ել չպիտի այդ ժողովները փոխարինեն։

Վերջապես բնակչությանը մոտիկ լինելու տեսակետից կարեսը ե նույնպես և այն, թե խորհուրդները վորտեղեն գտնվում։ Դավառամասի չափազանց լայնացումը, ինչպես և այն հանգամանքը, վոր մի շարք գյուղեր միասին միայն մեկ խորհրդով են կառավարվում, — դրանք անհարմարություններ են ստեղծում բնակչության համար՝ նրան հեռացնելով ու կտրելով խորհուրդներից։ Զպետք ե թույլ տալ այդպիսի չափազանց լայնացում։

Խորհուրդների աշխատայումը — այդ վոյ թե ազիսացիոն գեղեցիկ խոսք ե, այլ մեր աշխատանիի հիմնական գիծը։

Պարզ ե միանգամայն, վոր մեր գյուղի պայմաններում (գյուղերում թանձր խավար ե տիրում, նրանք իրարից ցրված են ու կտրված, նրանցում համապատասխան ուժեր բացակա-

յում են և աշխատակիցների նյութական դրությունը անբավարար ե), գյուղական միջավայրի ծանր պայմաններում, — խորհուրդների աշխատացման խնդիրն այնքան ել հեշտ գործ չե։ Ուստի և այդ խնդիրները մենք կարող ենք իրականացնել վոչ թե հարվածային կամպանիայի ձևով, այլ համառ, լուրջ և տեսական աշխատանքի միջոցով։ Պետք ե անվախ մերկացնել մեր գյուղական խորհրդային ապարատի բոլոր բացերը, պետք ե վերադաստիարակել մեր գյուղական աշխատակիցներին, պետք ե բոլորն ել լավ ըմբռնեն, վոր խորհուրդների աշխատացման լոգունդը ագիտացիայի, արտաքին աշխարհի համար չե վոր հայտարարված ե, այլ վոր դա մ'եր աշխատանիի հիմնական ղեկավար գիծն ե։ Կուսակցությունը վոչ թե գեղեցիկ խոսքի, այլ համառ, յերկարատև աշխատանքի համար ե իր առաջ դրել այդ խնդիրը — բարելավել տեղական գյուղական աշխատանքը, բարելավել գյուղի կուլտուրական, քաղաքական և տնտեսական կարիքների բավարարման գործը, գյուղի ակտիվ խավերը մերձեցնել խորհրդի աշխատանքներին, վոչնչացնել գյուղում դեռևս յերբեմն-յերբեմն հանդես յեկող անորինականությունները, քմահաճույքը, բյուրոկրատիզմը, հրամաններ արձակելլ, արհամարհական վերաբերմունքը գեպի գյու-

ղացու գանգատը, դեպի նրա հայտնած անբավականությունն ու քննադատությունը։

Անկուսակցականներին աշխատանիի խաչելու յեվ գյուղական կոմունիստի դերի մասին

Յերբ կուսակցության կենտրոնական Կոմիտեն խորհուրդների աշխատացման լոգունգը հայտարարելուց հետո սկսեց անվախ ու վճռականութեն մերկացնել մեր գյուղական աշխատանքի բոլոր բացերը, — գյուղական աշխատողներից վոմանք չհասկացան այդ քաղաքականության եյությունը և դա համարեցին վորպես «արշավանք» գյուղական կոմունիստների դեմ։ Տեղատեղ ձայներ են լսվում գյուղական կոմունիստի մատուցած ծառայության «թերագնահատման» մասին, կոմունիստի, վորն աշխատում ե գյուղի չափազանց ծանր սպայմաններում, բավարար դեկավարություն և ոգնություն չի ստանում, վորը շրջապատված ե մանր բուրժուական տարրերով, զուրկ ե քաղաքական բավարար գարգացում ստանալուց և այլն և այլն։ Այդպիսի ձայները միայն վկայում են, վոր հարցի եյությունը չի ըմբռնված։ Միանգամայն պարզ ե, վոր այժմ վոչ միայն խոսք չի կարող լինել գյուղական կոմունիստի դերի և նշանակության թերագնահատման մասին, այլ ընդհակառակն, — անկու-

սակցական ակտիվը աշխատանքի մոտեցնելը, գյուղացիական մասսան խորհրդային քաղաքականության, բանվորա-գյուղացիական դաշնքի գծով աշխատանքի գրավելը, — այս բոլորը մի իւնի անգամ ավելացնում ե գյուղական կոմունիստի պատասխանատվորությունը, տասնապատկում և խորհրդային հասարակության բոլոր արտահայտությունները գյուղում կուսակցական գծով դեկավարելու նշանակությունը։ Առանց կուսակցական այդպիսի լուրջ, մտածված և ուշադիր դեկավարության՝ ներկա պայմաններում գյուղում մեզ կարող եր սպառնալ մեր քաղաքական դիրքերի կորուստ և այդ դիրքերի գրավում՝ կուլակային (և քաղաքականապես նրանց համապատասխան) խմբակների ու խավերի կողմից։

«Կառուցել կոմունիզմ վոչ-կոմունիստական ձեռքերով» — հնարավոր ե միայն այն ժամանակ, յերբ մեր ամբողջ խորհրդային և հասարակական մեքենայի դեկը գտնվում ե կոմունիստական ամուր ձեռներում։ Բջիջը չպետք ե փոխարինի խորհրդին, բայց բջիջը պարտավոր ե իր ազգեցության ամբողջ ուժով ապահովել խորհրդային ապարատի կանոնավոր և հաջողակ աշխատանքը։ Դրա համար բջիջը պարտավոր ե ոգտագործել գյուղի չքավորների և միջակների խավերում ունեցած իր վողջ հեղինակությունը։

«Զհրամայել»—դա բոլորովին չի նշանակում իր ամբողջ աշխատանքը սահմանափակել ագիտացիայով և պրոպագանդայով, դա նշանակում ե իր յետեից տանել և մասսաները, և գյուղացիական ակտիվը, և գյուղացիական կազմակերպությունները՝ գործնական ղեկավարության և ուշադիր մոտեցումի միջոցով, առաջադրված խրնդիրները պարզ կերպով նիշելու և մասսաների գիտակից ինքնագործնեյության միջոցով, այդ խնդիրներն իրականացնելու ուղիները մշակելու միջոցով, անկուսակցականների խավի տկանիվի աշխատանքի միջոցով—համոգելով ու գործով ապացուցել նրանց, վոր կուսակցական գիծը և կուսակցական վորոշումներն ուղիղ են:

Կուսակցության ղեկավարության ներքո՝ անկուսակցականներին աշխատանքի քաշելու խնդիրը նոր չեւ Այդ խնդիրն առաջ ե քաշել Վաղութիմիր հԱխչը գեռ 1922 թվին, յերբ նա կուսակցության XI համագումարում արտասանած իր հայտնի ճառում ասաց.

«Մեր կուսակցության լայն մասսաները չեն գիտակցում անկուսակցականներին աշխատանքի քաշելու անհրաժեշտությունը։ Այդ մասին վորքան շրջաբերականներ ե դրված, վո՞րքան ե խոսված, իսկ մի տարբա՞ ընթացքում վորեն բան արված ե։ Վոչի՞նչ... Ահա թե մենք վորքան ենք

յետ մնացել այդ պահանջից, վորն այժմ հերթի յե դրված։ ահա՛ թե ինչ չափով ենք մենք ապրում 1918 և 1919 թվերի տրագիցիաներով։ Դրանք մեծ, նշանավոր տարիներ եյին. կատարված ե համաշխարհային-պատմական գերազույն գործ։ Իսկ յեթե մենք դեպի յետ այդ տարիներին նայենք և չտեսնենք, թե այժմ ինչպիսի խնդիր ե հերթի դրված, — այդ կլիներ կորուստ, անկասկածելի բացարձակ կորուստ։

Այժմ կյանքն ամենայն համառությամբ հիշեցնում ե մեղ անկուսակցականներին աշխատանքի քաշելու խնդրի իսկական իրականացման անհրաժեշտությունը, և այստեղ չի կարող լինել վոչ մի ձգձգում։ «18—19 թվականների տրագիցիաների» աղղեցության տակ։

Հարցի եյությունն այժմ կայանում ե նրանում, վոր մեր ընկերները տեղերում լրաց յեկ անկեղծորեն իրենց աշխատանքը փոխեն այնպես, ինչպես այդ նրանցից պահանջում ե կուսակցությունը, ինչպես այդ անհրաժեշտ և գյուղի ներկա պայմաններում։ Խորհրդային պետության ամրության, բանվորա-գյուղացիական դաշնութի, հետևապես և մեր ամբողջ պատմական գործի բախտն այժմ նշանավոր չափով վճռվում ե ԽՍՀՄ տամայակ հաղարավոր գյուղերում, այնտեղ, ուր մի բուռն կուսակցական աշխատողներ իրոք ծանր

պայմաններում դեկավարում են գյուղացիության
միլիոնավոր մասսաները։ Այդ մի բուռն ընկեր-
ներն իսկապես կհամախմբեն իրենց շուրջը աշ-
խատավոր գյուղացիությունը, յեթե նրանք
առանց գոռոզության, նոր խնդիրների լրջության
ամբողջ գիտակցությամբ ձեռնարկեն զրանց իրա-
կանացման և իրավես գյուղացիությանը ցույց
տան արողետարիստի գիտատուրայի և բանվո-
րագյուղացիական դաշինքի առավելություննե-
րը՝ բուրժուական-դեմոկրատական իշխանության
և հասարակակարգի բոլոր ձևերի հանգեց:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	b2
Տնտեսական հաջողություններ յեկ խորհրդային ապա-	
րատի բարեկազում	4
Գյուղացիության բաղաքական ակտիվության անումը .	8
Գյուղացիության ակտիվությունը պետք ե լինանա	
խորհրդային գծով	11
Հարկադրամն յեկ համոզում	13
Խորհուրդները մասայական ինֆնագործնեյության	
մարմիններ են	15
Խորհրդային աշխատանքի թերությունները զյուղում .	18
ՀԿԿ (բ) ԿԿ գորուումները՝ զյուղխորհուրդները աշ-	
խուժացնելու մասին	24
Պետք ե բարեկամի ընտրություններ կատարելու գործը .	29
Անկուսակցական զյուղացիներին պետք ե մասնակից	
անել խորհրդի աշխատանքներին	30
Բջիջը չպետք է փոխարինն խորհրդին	33
Կուսակցական դեկավարությունը չըուլացնել, այլ	
ուժեղացնել	34
Հեղափոխության յեկ խորհրդային իշխանության	
քննամիններին պետք է դիմադրություն ցույց տալ .	35
Խորհուրդների աշխատանքին պետք է կենդանի բո-	
վանդակություն տալ	37
Գավառամասային բյուջե	38
Գյուղխորհրդի իրավունքները յեկ պարտականություն-	
ները	41
Գավառամասային գործկում	43

Մասուների մասնակցությունը խորհրդի աշխատան-	
բուլը: Կանոնավոր հաշվետվություն	46
Խորհուրդների աշխատացումը—այդ վոչ թե ազիտա-	
ցիոն գեղեցիկ խոսք է, այլ մեր աշխատան-	
քի հիմնական գիծը	48
Անկուսակցականներին աշխատանքի բաժեկու յեկ	
գյուղական կոմոնիստի դերի մասին	50



39 732

ԳԻՒԸ 30 ԿՈՊԵԿ



Ագիտպրոլ ЦК ВԿՊ(б)
Библиотека деревенского коммуниста.

З. ЛАВРЕНТЬЕВ

**Как оживить
сельсоветы.**

На армянском яз.

Центральное Издательство Народов Союза ССР

Москва

Никольская, 10.